

# Մարզպետին առընթեր Երիտասարդական Խորհուրդը երկօրյա ֆորում էր կազմակերպել

08.04.2019

Կոտայքի մարզպետին առընթեր Երիտասարդական Խորհուրդը ապրիլի 6-7-ը Ծաղկաձորի Գրողների ստեղծագործական տանը կազմակերպել էր «Սոցիալական ներգրավվածությունը մարզում, կապը վաղվա հետ» խորագրով երկօրյա ֆորում Հայաստանի երիտասարդական և սոցիալական աշխատողների համար:

Սա Երիտասարդական Խորհրդի կողմից մարզի երիտասարդական կյանքի բարելավմանը միտված առաջին գործնական քայլն էր:

Ֆորումին մասնակցում էին 24 երիտասարդներ մարզի տարբեր համայնքներից:

Դասընթացավարները «Եղվարդ» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներն էին:

Երիտասարդական խորհրդի քարտուղար Գևորգ Պետրոսյանը և խորհրդի անդամ Արգիշտի Մովսիսյանը հայտնեցին, որ ֆորումի հիմնական նպատակը մասնակիցներին նոր գիտելիքներով զինելն էր, մարդու սոցիալական իրավունքների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը բարձրացնելը:

Մասնակիցներն արդեն պատրաստ են իրենց համայնքներում փոքրիկ սեմինարներ կազմակերպել և տեղում կիրառել ստացած գիտելիքները:

Կազմակերպչական աշխատանքներն իրականացվել են Կոտայքի մարզպետարանի աջակցությամբ, իսկ ընտրված երիտասարդների մասնակցությունը հնարավոր է դարձել համայնքների ղեկավարների հետ փոխգործակցության արդյունքում:

Երիտասարդական Խորհրդի կողմից հրավիրված են եղել հատուկ հյուրեր՝ «Հայ-ռուսական երիտասարդական միություն» ՀԿ նախագահ Ռաֆայել Պողոսյանն ու փոխնախագահ Էդուարդ Խաչատրյանը, ինչպես նաև ՌԴ Արդարադատության նախարարության մագիստրոս Արսեն Հունանյանը: Նրանք կոչ են արել երիտասարդներին ակտիվ լինել: Նոր գաղափարների շուրջ համագործակցելու նպատակով տեղում առաջարկներ են հնչել, պայմանավորվածություններ են ձեռք բերվել ամենամոտ ժամանակներում տարբեր ծրագրերով Կոտայքի մարզում համագործակցելու ուղղությամբ:

Ֆորումի ավարտին մասնակիցները Երիտասարդական Խորհրդի կողմից ստացել են մասնակցության վկայականներ: